

ԲԱՌԻ ԻՍՈՒՅԹԱՅԻՆ ԿԱԶՄԻ ԵՎ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ
ՆԵՐՈՒԺԻ ԿԱՊԻ ՄԱՍԻՆ

Արդի լեզվաբանության մեջ մեծ տեղ է հատկացվում բառիմաստի ուսումնասիրությանը, որը կարևոր դեր է խաղում այնպիսի խնդիրների պարզաբանման ժամանակ, ինչպիսիք են բառիմաստի զարգացման տարբեր ուղիները՝ հոմանիշությունը, համանունությունը և այլն: Սակայն բառիմաստի կարևորությունը չի սահմանափակվում միայն իմաստաբանության շրջանակներով: Պետք է նշել, որ բառակազմական գործընթացներին զուգահեռ տեղի են ունենում իմաստային բարդ վերափոխումներ ինչպես սերող և ածանցյալ բառերի միջև, այնպես էլ ածանցյալ բառի հիմքի և ածանցի միջև: Ստեղծման պահին նոր բառը ստանում է միայն մեկ իմաստ: Հետագայում բառը կարող է բազմիմաստ դառնալ, ընդ որում ածանցյալ բառի իմաստային կառուցվածքի զարգացումը էապես տարբերվում է արմատական բառերի իմաստային կառուցվածքի զարգացումից, քանի որ դրան նպաստող իմաստային գործոնները նույնը չեն: Ինչպես հայտնի է, «արմատական բառերի բազմիմաստության հիմնական ուղիները փոխաբերությունը, փոխանունությունն ու համընթացումն են, մինչդեռ ածանցյալ բառի յուրաքանչյուր իմաստ որպես կանոն ածանցվում է սերող բառի առանձին իմաստից(6;27)»: Մյուս կողմից ածանցյալ բառի բազմիմաստության պատճառ կարող է լինել նաև հենց ածանցի բազմիմաստությունը, որտեղ նորից մեծ է սերող բառի դերը, քանի որ «բազմիմաստ ածանցը ածանցյալ բառում իրականացնում է միայն այն իմաստը, որին նրան կողմնորոշում է սերող բառը(4;16)»:

Ինչպես ցույց են տալիս ռուսերենի հիման վրա կատարված մի շարք ուսումնասիրություններ, բառակազմական գործընթացում էական դեր կարող են ունենալ ոչ միայն սերող բառի առանձին իմաստները, այլև բառիմաստի բաղադրիչ իմությունները: Բառիմաստի բաղադրական վերլուծությունը կարող է որոշակի պատկերացում տալ ուսումնասիրվող կոնկրետ արմատական բառի բառակազմական ներուժի մասին, այսինքն՝ թե ուսումնասիրվող բառն ինչպիսի հնարավոր բառակազմական իմաստներ կարող է զարգացնել, որոնք, իրականացվելով որոշակի ածանցյալ բառերում, կազմում են համապատասխան բառի բառակազմական բունը/փունը/ (1,3,5,7): Այսպիսով, ածանցյալ բառի իմաստի կազմավորման մեջ մեծ դեր է խաղում սերող բառի իմաստը, որն ընդունակ է որոշակի տեղեկություն տալ հարաբերությունների այն տիպի մասին, որն ընկած է նորաստեղծ անվանման հիմքում: Այդ հարաբերությունները տարբեր կերպ են արտացոլվում տարբեր խոսքի մասերին և տարբեր բառիմաստային

խմբերին պատկանող բառերում: «Նշված հարաբերություններն ավելի բացահայտ են արտահայտված բայերում, քանի որ հենց բայերի իմաստում է, որ նշվում է ոչ միայն անվանական/սուբյեկտ-օբյեկտ/ բաղադրիչների առկայությունը, այլ նաև նրանց փոխադարձ կապի բնույթը (14;10)»:

օր. to slash¹ – to violently cut or try to cut sth with a knife, sword

to snip- to cut sth by making quick cuts with scissors

Ինչպես տեսնում ենք նշված բայերի սահմանումներից նրանց իմաստում առկա է “(սուբյեկտ)-²գործիք-օբյեկտ” հարաբերությունը:

Բառի իմությանին կազմի և նրա բառակազմական ներուժի կապի ուսումնասիրության համար լեզվաբանության մեջ ընդունված մեթոդ է վերլուծության ենթարկել նույն բառիմաստային խումբը կազմող բառեր, քանի որ նման մոտեցումը հնարավորություն է տալիս ցույց տալ այդպիսի բառերի բառակազմական բների կառուցվածքային տարբերությունները և վերհանել, թե որքանով են դրանք պայմանավորված բառի իմությանին կազմի տարբերություններով: Երկու տարբեր լեզուներում նման վերլուծությունը, և հետագայում դրա արդյունքների զուգադրումը կարող է նշված երևույթի մասին ավելի խոր պատկերացում տալ: Այս նպատակով վերլուծության է ենթարկվել “ավերման” բայերի բառիմաստային խմբի մի մաս կազմող *to cut/կտրել, հատել* նույնացուցիչներով /իդենտիֆիկատոր/ ենթախմբի անդամների բառակազմական բները անգլերենում և հայերենում³:

Բառակազմական բունը /փունջը/ նույնարմատ ածանցյալ բառերի ամբողջությունն է՝ ընդհանուր արմատ ունեցող բոլոր բառակազմական շարքերի և բառակազմական հարացույցների միասնությունը(5;106):

Կոնկրետ բայերի բառակազմական բների ուսումնասիրության հիման վրա կազմվել է նշված ենթախմբի տիպային բառակազմական բունը /ՏԲԲ/, որի մեջ են մտնում բառակազմական այն իմաստները, որոնք ընդհանուր են կոնկրետ բառակազմական բներից գոնե երկուսի համար: Ընդունված է ՏԲԲ-ի կառուցվածքը ներկայացնել տարբեր գոտիների միջոցով՝ ըստ նրանց անդամների խոսքիմասային պատկանելության: Հետևաբար առանձնացնում են անվանական, ածականական, բայական, մակբայական և այլն գոտիներ(1;9):

Բառակազմական տեսակետից առանձնակի դժվարություն են ներկայացնում հայերենի բայերը: Ինչպես նշում է ակադեմիկոս Գ.Ջահուկյանը,

¹ Արմատական բայերի սահմանումները վերցրել ենք “Longman Dictionary of Contemporary English” բառարանից:

² Սուբյեկտն ինքնին ենթադրվում է, քանի որ նշված բայերն անցողական են:

³ Երկու լեզուների ուսումնասիրվող ենթախմբի բառակազմական բները կազմվել են. անգլերենում՝ “The Oxford English Dictionary”(16) բառարանի /12 հատոր/, հայերենում՝ Է.Աղայանի երկհատոր «Արդի հայերենի բացատրական բառարանի»(17) և “Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի”(18) հիման վրա:

«Արժատական բուն բայերը բառիս իսկական իմաստով արդի փուլում քարացած՝ բայերից և նրանց ածանցյալներից դուրս գործածություն չունեցող ծներ են, որոնց ստուգաբանական վերլուծության դեպքում էլ հաճախ նույնպես հայտնաբերվում է անհիմքություն»(11:19): Հայերեն նյութի վերլուծության ժամանակ օգտվել ենք Գ.Ջահուկյանի կողմից կազմված բայարժատների ցանկից: Անգլերենում այս առումով դժվարություն է ներկայացնում փոխարկման /կոնվերսիա/ երևույթը: Փոխարկման ուղղությունը պարզելու համար հիմք է ընդունվել Հ.Մարջանդի(8), Ա.Ի.Սմիրնիցկու(12) և Պ.Ա.Սոբոլևայի(13) կողմից մշակված չափանիշները, ինչպես նաև "The Oxford English Dictionary"(16) բառարանի տվյալները:

Ուսումնասիրվող ենթախմբի անդամները զուգադրվող երկու լեզուներում էլ ցույց են տալիս առարկան /հիմնականում փափուկ առարկա/ սուր գործիքով մասերի բաժանելու գործողություն՝ այսինքն այս կոնկրետ դեպքում առկա է (սուբյեկտ)-գործիք- օբյեկտ-արդյունք քառամղամ հարաբերությունը:

to cut- 1/ to make an opening or wound in sth , esp. with a sharp tool such as a knife or scissors

2/ to divide sth into smaller pieces with a knife, ect.

կտրել⁴ – 1/ սուր գործիքով հատելով ամբողջից մաս անջատել

2/ հատելով մասերի բաժանել, մաս-մաս անել, կտրտել

Անգլերենի նշված բառիմաստային ենթախմբի նույնա-ցուցիչը՝ *to cut* բայն իմաստով ամենաընդհանրականն է, հետևաբար *to cut*-ը կարող է փոխարինել ենթախմբի ցանկացած այլ անդամի: Նշված բայը համոն է գալիս որպես սեռանիշ խմբի նյութ՝ տեսականիշ անդամների վերաբերյալ, որոնք նշված իմաստի ավելի կոնկրետ դրսևորումներ են:

օր. to chop – to cut sth such as food or wood into smaller pieces

to shear – to cut the wool off a sheep

Եթե անգլերենի *to cut* ենթախմբի կազմում կա 21 արժատական բայ /to slice, to chop, to mince, to pare, to bite, to sever, to slit, to nick, to cleave, to slash, to hack, to hew, to snip, to incise, to shear, to fell, to amputate, to eviscerate, to mow, to shave/⁵, ապա հայերենի նույնանուն ենթախմբը մեծ մասամբ կազմված է ածանցավոր և բարդ բայերից և ընդգրկում է միայն 13 արժատական բայ: Հայերենի համապատասխան ենթախմբի նույնացուցիչներն են *կտրել* և *հատել* բայերը, իսկ ուսումնասիրվող իմաստի ավելի կոնկրետ

⁴ Հայերեն բայերի սահմանումները վերցրել ենք է. Աղայանի "Արդի հայերենի բացատրական բառարանից":

⁵ Ուսումնասիրվող ենթախմբի կազմը շատ ավելի մեծ է, սակայն վերլուծության նպատակով առանձնացվել են միայն արժատական բայերը:

դրսևորումների արտահայտիչներն են *տաշել*, *կոտորել*, *կծել*, *կլպել*, *սափրել*, *խուզել*, *հմծել*, *էտել*, *հերծել*, *գերծել*, *կրտել* բայերը:

Անգլերենի և հայերենի ուսումնասիրվող ենթախմբի տիպային բառակազմական բների համեմատությունը վեր է հանում հետևյալ պատկերը.

Անգլերենի տվյալ ՏԲԲ-ն չունի բայական գոտի/ԲԳ/: Իսկ հայերենի համապատասխան ԲԲ-երի քննարկումը նպատակահարմար է սկսել բայական գոտուց, քանի որ այն հիմնականում բազմանդամ է, և նրա անդամների մեծ մասը բառակազմական երկրորդ և երրորդ քայլում հիմք է հանդիսանում անվանական/ԱԳ/ և ածականական գոտիների/ԱծԳ/ ձևավորման համար: Այսպես, հայերենի *կտրել*, *հատել* նույնացուցիչներով ենթախմբի անդամների մեծ մասը, միանալով բազմապատկական ածանցների հետ, կազմում է ածանցավոր բայեր՝ “գործողության ուժգնության, բազմակիության” բառակազմական իմաստով⁶: Հետաքրքրական է, որ միևնույն բային կարող են միանալ մի քանի բազմապատկական հոմանիշ ածանցներ՝ ստեղծելով հոմանիշ տարբերակներ. օրինակ. *կտրել-կտրտել*, *կտրատել*; *կծել-կծտել*, *կծատել*; *հերծել- հերծատել*, *հերծոտել*: Ենթախմբի այնպիսի անդամների ԲԲ-երում, ինչպիսիք են *սափրել*, *խուզել* բայերը նշված բառակազմական իմաստը/ԲԻ/ ներկայացված չէ, քանի որ, ինչպես հայտնի է, բազմապատկական ածանց կարող են ստանալ միայն այն բայերը, որոնց ցույց տված գործողությունը բաղկացած է առանձին ակտերից, իսկ *խուզել* և *սափրել* բայերը ցույց են տալիս տևական, անընդմեջ գործողություն: Բազմապատկական ածանց չի ընդունում նաև ենթախմբի մյուս անդամը՝ *կոտորել* բայը, քանի որ նրա բառիմաստում արդեն առկա է ուժգնության իմուլթը⁷. Օր. կոտորել- սուր գործիքով հարվածելով կամ կտրելով մաս-մաս անել՝ կտորների բաժանել:

Ժամանակակից անգլերենում բազմապատկական ածանցները համարվում են հնացած և ոչ կենսունակ ձևեր: Ինչպես գրում է Տ.Ս.Բեյլսան «*Խ և Եր*» բայական ածանցների դուրս մղումը պայմանավորված էր նրանով, որ դրանք արտահայտում էին կրկնության/բազմապատկական և տևողության զգացմունքային երանգավորման տարբեր իմաստներ, որոնք անգլերենի բայի համար էական չէին: Լինելով բնութթվ զուսպ մարդիկ անգլիացիները խուսափում են զգացմունքների արտահայտման արտաքին ձևերից(4-32)»: Չժխտելով նման

⁶ Բառակազմական իմաստների ձևակերպումները տալիս օգտվել ենք Ս.Ասատրյանի “Ժամանակակից հայոց լեզու”, Карацук П.М. “Словообразование английского языка” Москва 1977, Мешков О.А. “Словообразование совр. английского языка” Мос. 1976 և “Русская Грам.-80” գրքերի տվյալներից, որոշ դեպքերում տվել ենք նաև մեր ձևակերպումները:

⁷ Բառի բառիմաստի և նրա բառակազմական վալենտականության միջև գոյություն ունի փոխադարձ կապ: Սերող բառի բառիմաստի ուսումնասիրությունը ցույց է տալիս, թե բառակազմական որ իմաստների հետ է այն համատեղելի: Այստեղ խոսքը գնում է իմաստաբանական սահմանափակման մասին(10;152):

պատճառաբանության հնարավորությունը, հարկ ենք համարում մաև նշել, որ անգլերենում գործողության ուժգնության իմաստը իրականացվում է հիմնականում բառային միջոցներով, այսինքն տվյալ դեպքում անհրաժեշտ է խոսել բառային սահմանափակման մասին(10;151):

օր. to hack-to cut sth into pieces roughly and violently

to slash-to violently cut or try to cut with a knife, sword

Անհրաժեշտության դեպքում նշված իմաստը կարող է արտահայտվել մաև նկարագրական միջոցով՝ բայի և որոշակի մակբայի միջոցով. օր. to cut violently: Հայերենի ուսումնասիրվող բոլոր բայերի կոնկրետ ԲԲ-երում ներկայացված է կրավորականության իմաստը, ընդ որում ինչպես բառակազմական առաջին քայլում / օր՝ *հատել- հատվել, խուզել- խուզվել*], այնպես էլ երկրորդ քայլում / *կտրել-կտրտել-կտրտվել, տաշել-տաշտշել-տաշտշվել*]: Անգլերենում չկա կրավորականության ցուցիչ, քանի որ այստեղ բայերի մեծ մասն իրենց իմաստային կառուցվածքում ունեն ինչպես անցողական, այնպես էլ անանցողական իմաստ: Անհրաժեշտ է նշել սակայն, որ անանցողական իմաստ ունեն ուսումնասիրվող ենթախմբի բայերից միայն մի քանիսը, քանի որ նրանք արտահայտում են գործիքի միջոցով կատարվող ակտիվ գործողություն: Այսպիսով նշված ենթախմբում կրավորականության իմաստը իրականացվում է կրավորական սեռի /passive voice/ միջոցով. օր. The body was hacked to pieces. His face had been slashed with a razor.

Հայերենի ՏԲԲ-ում ներկայացված են ևս երկու բառակազմական իմաստներ. "դեպի դուրս և դեպի ներս ուղղված գործողությունների" ԲԻ-եր, որոնք իրականացված են միայն երկու կոնկրետ ԲԲ-երում /արտահատել, արտատաշել և ներհատել, ներտաշել/: Այսպիսով, հայերենի բայախմբի ՏԲԲ-ի ԲԳ-ն ներկայացված է չորս ԲԻ-երով, մինչդեռ անգլերենի համապատասխան ՏԲԲ-ում այն ընդհանրապես ձևավորված չէ:

Կազմված ՏԲԲ-երի անվանական գոտիների զուգադրումը վեր է հանում մի շարք նմանություններ և տարբերություններ: Երկու ՏԲԲ-երում էլ ներկայացված է "գործողության անվանման" բառակազմական իմաստը: Այնուամենայնիվ, անգլերենում այն կարող է այնուհետև մասնավորեցվել գործողության ընթացքի և գործողության մեկ ակտի ենթաիմաստների:

Ընդհանուր առմամբ հայտնի է, որ գերմանական ծագում ունեցող բայերի ԲԲ-ում նշված իմաստները հիմնականում արտահայտվում են փոխարկման և -ing ածանցով կազմված գոյականների միջոցով: Անհրաժեշտ է նշել, որ փոխակերպակներին /կոնվերսիվ/ հատուկ է գործողության մեկ ակտի անվանումը, իսկ ing ածանցով կազմված գոյականներին՝ գործողության ընթացքի անվանումը(4;25).օր. cut/n/ -act of cutting -cutting/n/- the action of the verb to cut.

Իմաստի այդպիսի մասնավորեցում տեղ չի գտել հայերենի ուսումնասիրված ՏԲԲ-ում: Արդի հայերենում գործողության անվանման ԲԻ-ին ներկայացնում են *ուժ* ածանցով կազմված գոյականները: Ուշադրության արժանի է այն փաստը, որ նրանք իմաստով սերվում են նույնարմատ չեզոք, պատճառական և կրավորական բայերից, օրինակ՝ *կտրում* և *կտրտում* գոյականները հանդիսանում են *կտրել*, *կտրվել* և *կտրտել*, *կտրտվել*, *կտրատել*, *կտրատվել* բայերիցույց տված գործողության անվանումը(5;108):

Մյուս իմաստը, որն ընդհանուր է համեմատվող ՏԲԲ-երի համար, “գործողության արդյունքի” ԲԻ-ն է: Այն հատուկ է երկու լեզուների զուգադրվող բայախմբերի համարյա բոլոր բայերի կոնկրետ ԲԲ-երին: Սա կարելի է բացատրել նրանով, որ քննարկված բայերի հիմնական մասի բառիմաստներում կարևորված է գործողության արդյունքի իմույթը: Զուգադրվող երկու լեզուներում էլ նշված բառակազմական իմաստը միատարր չէ. այն կարող է դրսևորվել տարբեր ենթաիմաստներով, ինչպիսիք են օրինակ.

ա/ գործողության արդյունքում առաջացած կտորի, մասի ենթաիմաստը

օր. chop – a piece chopped off; a slice, cutlet

տաշեղ – 1/ փայտը տաշելիս առաջացած մանր, բարակ, թեթև շերտեր

բ/ գործողության արդյունքում առաջացած բացվածքի, կտրվածքի ենթաիմաստը. օր. slash – a long and deep and severe cut; a wound of this character կտրվածք- 2/ կտրված, հատված տեղ

գ/ գործողության արդյունքի նվազականության իմաստը

օր. snip – a small piece cut off

Հետաքրքրական է, որ անգլերենում գործողության արդյունքի բառակազմական իմաստը չունի իր ուրույն բառակազմական ցուցիչը, այսինքն չկա որևէ ածանց, որն օգտագործվի նշված ԲԻ-ը արտահայտելու համար: Նման իմաստ ներկայացնում են հիմնականում գործողության անվանման ԲԻ-ով ածանցված գոյականները: Անգլերենում այդպիսի հակում են դրսևորում մեծ մասամբ փոխակերպակները.

օր. slash⁸ – 1/ a cutting stroke delivered with an edged weapon or instrument
2/ a long and deep or severe cut, a wound of this character

snip – 1/ a small piece or slip, esp. of cloth, cut off

II/ 5/ a small cut or incision made by a pair of scissors: a wound of this nature

6/ an act of snipping

Ի տարբերություն անգլերենի, հայերենն առանձին ածանցներ է տրամադրում անգամ նշված ԲԻ-ի առանձին ենթաիմաստների արտահայտման

⁸ Ածանցյալ բառերի սահմանումները վերցրել ենք՝ The Oxford English Dictionary⁽¹⁶⁾ բառարանից

համար: Այսպես. եթե *կտրոն, տաշեղ* ածանցավոր գոյականները ներկայացնում են "գործողության արդյունքում առաջացած կտորի, մասի" ենթաիմաստը, ապա *կտրվածք, կտրտվածք* և *հատված, տաշվածք* գոյականները՝ "գործողության արդյունքում առաջացած բացվածքի" ենթաիմաստը: Հայերենում առանձնանում է ևս մեկ ենթաիմաստ՝ "գործողության արդյունքների ամբողջության" իմաստը, որը ներկայացնում են *ուլունկ, անք*, և երբեմն էլ *(վ)ածք* ածանցներով կազմված գոյականները /օր. կտրուք, տաշուկ/: Անգլերենում համապատասխան ենթաիմաստը դարձյալ իրականացվում է քերականական միջոցով՝ հոգնակի թվով. օր. chops, slices.

Ինչպես արդեն նշել ենք, ուսումնասիրվող բայերի արտահայտած գործողության հիմքում ընկած է (սուբյեկտ)-գործիք-օբյեկտ-արդյունք հարաբերությունը. այսինքն կարելի է եզրակացնել, որ այս բայերը բառակազմական ակտիվություն կարող են ցուցաբերել ոչ միայն "գործողության արդյունքի", այլև "գործողության գործիքի" ԲԻ-ի ուղղությամբ: Այդ մասին են փաստում նաև քննարկվող ՏԲԲ-երը: Հատկանշական է, որ քննարկվող բառակազմական իմաստը ներկայացված է կոնկրետ ԲԲ-երի մեծամասնության մեջ, դեռ ավելին՝ որոշ բայերի ԲԲ-երում այն ներկայացված է մի քանի ածանցյալների միջոցով: Անգլերենում գործողության գործիքի ԲԻ-ը հիմնականում իրականացվում է *er* ածանցով կազմված գոյականներում: Սակայն նշված ածանցյալների հետ մեկտեղ այս ԲԻ-ը ներկայացված է նաև փոխակերպակներում.

օր. hack – 1/ a tool or implement for breaking or chopping up

chop – 3/ an instrument or appliance for chopping

Նույն երևույթը դիտվում է նաև հայերենում, որտեղ համապատասխան ենթաիմաստի որոշ կոնկրետ ԲԲ-երում քննարկվող ԲԻ-ին ներկայացված է մի քանի ածանցյալ գոյականներով.

օր. *կտրիչ, կտրոց; տաշիկ, տաշիչ; հատիչ, հատոց, ներհատիչ*

Բերված տվյալները փաստում են այն մասին, որ "գործողության գործիքի" ԲԻ-ը երկու լեզուներում էլ ունի ներկայացվածության բարձր գործակից(1;15):

Անվանական գոտու մյուս բառակազմական իմաստը, որն ընդհանուր է զուգադրվող ՏԲԲ-երում, "գործողությունը կատարողի" ԲԻ-ն է: Անգլերենում այն իրականացվում է *er* ածանցով կազմված գոյականներում և տեղ է գտել այն բոլոր ԲԲ-երում, որտեղ առկա է նաև գործիքի ԲԻ-ը: Բացառություն է կազմում միայն mincer գոյականը, որը ներկայացնում է միայն նշված վերջին իմաստը՝ ամենայն հավանականությամբ այն պատճառով, որ տվյալ դեպքում գործողության սուբյեկտը մեքենան է, այսինքն գործողության գործիքը:

Հայերենում "գործողության կատարողի" ԲԻ-ը իրականացված է միայն սափրել, խուզել, հնձել և էտել բայերի ԲԲ-երում սափրիչ, խուզվոր, հնձվոր/հնձավոր, հնձարար և էտվոր ածանցյալների միջոցով: Մեր կարծիքով

սա կարելի է բացատրել նրանով, որ նշված բայերը ցույց են տալիս գործունեության կոնկրետ բնագավառ՝ զբաղմունք, մասնավորապես գյուղատնտեսության մեջ, և դա բերում է այդ գործունեությամբ զբաղվող անձի անվանման պահանջարկին: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ անհրաժեշտության դեպքում հայերենում նման պահանջարկը կարող է բավարարվել ենթակայական դերբայների միջոցով. օր. *կտրող, տաշող*, որոնք բառարանները հիմնականում չեն գրանցում:

Բացի վերը քննարկված ԲԻ-երից հայերենի ՏԲԲ-ում ընդգրկված են ևս երեք բառակազմական իմաստ, որոնք տեղ չեն գտել անգլերենի համապատասխան ՏԲԲ-ում: Դրանցից առաջինը "գործողության կատարման ձևի, կերպի" ԲԻ-ն է, որն իրականացվել է հայերենի *վածք* ածանցի բազմիմաստության շնորհիվ. օր. կտրվածք – կտրելու ձևը՝ եղանակը

տաշվածք – տաշելու ձև՝ որակ

Դաջորդ բառակազմական իմաստը, որ տեղ է գտել հայերենի քննարկվող ենթախմբի ՏԲԲ-ում "գործողությանը ենթարկված լինելու վիճակի" ԲԻ-ն է, որն իրականացված է *կտրել* և *հատել* բայերի կոնկրետ ԲԲ-երում, օր. *կտրտվածություն, հատվածություն*:

Անհրաժեշտ է նշել, որ անգլերենի նույն ենթախմբի միայն մեկ բայի (to sever) ԲԲ-ում է, որ նշված իմաստը իրականացված է, հետևաբար այն չի կարող տիպային համարվել տվյալ ենթախմբի համար:

Թեև զուգադրվող երկու լեզուների ՏԲԲ-երի ԱծԳ-ում էլ ներկայացված է "գործողությունը կատարելու ունակության հատկանիշի" ԲԻ-ը, սակայն միայն հայերենի ՏԲԲ-ի ԱԳ-ում է, որ բառակազմական երկրորդ քայլում ներկայացված է նշված հատկանիշի անվանման ԲԻ-ն. օր. *կտրողություն, հատողություն*:

Զուգադրվող ՏԲԲ-երի ԱծԳ-երը հանդնկնում են բառակազմական երեք իմաստներով.

1. Երկու լեզուներում իրականացված է "գործողությունը կատարելու ունակության հատկանիշի" ԲԻ-ը: Անգլերենում այն ներկայացված է ենթախմբի բոլոր կոնկրետ ԲԲ-երում դերբայական ածականների միջոցով: Թեև հայերենում քննարկվող իմաստն առկա է ոչ բոլոր ԲԲ-երում, քանի որ բառարանները միշտ չէ, որ գրանցում են դերբայական ածականները, այն անշուշտ մտնում է լեզվի ներուժի մեջ: Պետք է նշել, որ նշված ԲԻ-ի իրականացման են ծառայում հայերենի *իչ, ու և ուկ* ածանցները. օր. *հատու, կտրուկ*:

2. Մյուս ընդհանուր բառակազմական իմաստը "գործողությանը ենթարկված լինելու" ԲԻ-ն է, որը դարձյալ ներկայացվում է դերբայական ածականների միջոցով. օր. chopped – 2/ reduced to fragments by chopping

snipped – 2/ that has been subjected to snipping.

հայերենում՝ *կտրտված, հատած/հատված*

Հետաքրքրական է, որ հայերենում կարելի է առանձնացնել քննարկվող ԲԻ-ի մեկ ենթախմաստ՝ տվյալ գործողության միջոցով պատրաստված լինելու հատկանիշ, որը իրականացվում է *ովի* ածանցի միջոցով. օր. *կտրովի, տաշովի* 3. Երրորդ բառակազմական իմաստը, որն ընդհանուր է զուգադրվող լեզուների համար՝ «գործողությանը ենթարկված չլինելու» ԲԻ-ն է. օր. անզլերենում՝ *uncut, unhacked, unsevered*, իսկ հայերենում՝ անհատ, անտաշ:

Անզլերենի SFA-ում առանձնանում է նաև «գործողությանը ենթարկվելու հատկանիշի» ԲԻ-ը, որն իրականացված է հայերենի միայն *կտրել* բայի ԲԲ-ում՝ *կտրտվող* ածանցյալի միջոցով: Այնուամենայնիվ, անհրաժեշտության դեպքում հայերենում նման իմաստը հեշտությամբ կարող է արտահայտվել կրավորական բայերի համապատասխան դերբայական ածականի միջոցով, այսինքն, կրկին մտնում է լեզվի բառակազմական ներուժի մեջ:

Նշենք նաև, որ իրենց իմաստային կառուցվածքում անցողական և անանցողական իմաստները համատեղող անզլերեն բայերի դերբայական ածականները կարող են իրականացնել բառակազմական երկու իմաստ՝ «գործողությունը կատարելու» և «գործողությանը ենթարկվելու» ԲԻ-եր: Սակայն քննարկվող ենթախմբի անդամները, ելնելով իրենց իմաստի առանձնահատկությունից. գործիքի միջոցով՝ դրսից կատարվող գործողություն, ունեն հիմնականում միայն անցողական իմաստ: Հետևաբար համապատասխան դերբայական ածականները չեն իրականացնում նշված իմաստներից վերջինը: Այն իրականացված է միայն *to slice* բայի ԲԲ-ում. օր. *slicing – cutting easily or clearly*.

Ուշադրության արժանի է նաև այն, որ անզլերենի վերը նշված «գործողությանը ենթարկված լինելու» ԲԻ-ը ներկայացնող ածականներում իրականացված է ևս մեկ՝ «գործողության արդյունքը կրելու հատկանիշի» ԲԻ-ը: Ելնելով այն փաստից, որ դերբայական ածականները չեն կարող ներկայացնել քննարկվող իմաստը, կարելի է գալ այն եզրակացության, որ նման դեպքերում գործ ունենք բազմակի ածանցման երևույթի հետ. այսինքն հնարավոր է առանձնացնել օրինակ բառակազմական համանուններ *chopped*₁ և *chopped*₂, *nicked*₁ և *nicked*₂, որտեղ բառակազմական առաջին քայլում ստեղծված դերբայական ածականը արտահայտում է «գործողությանը ենթարկված լինելու հատկանիշի» ԲԻ-ը, իսկ երկրորդ քայլում ստեղծված/*n+ed*/ ածականները՝ «գործողության արդյունքը կրելու հատկանիշի» ԲԻ-ը:

Նշված վերջին իմաստը հայերենին տիպական չէ, քանի որ ներկայացված է միայն *հատել* բայի ԲԲ-ում՝ *հատվածավոր* ածանցյալի միջոցով:

Հայերենի SFA-ի համար տիպական չէ նաև մակբայական գոտին/ՍԳ/, քանի որ այն ձևավորված է դարձյալ միայն *հատել* բայի ԲԲ-ում, մինչդեռ անզլերենում այն տիպական է՝ տեղ է գտել երկու կոնկրետ ԲԲ-ում և ներկայացնում է «գործողությունը կատարելու հատկանիշի հատկանիշ» ԲԻ-ը:

Անգլերենի և հայերենի ՏԲԲ-երի մամուլությունները և տարբերությունները ավելի ցայտուն ցույց տալու համար տալիս ենք նրանց ընդհանուր ՏԲԲ-ն, որն ունի հետևյալ տեսքը.⁹

ԲԲ-ի գոտիները	Բառակազմական իմաստները
1. Բայական գոտի	1. ուժգնության, բազմակիության ԲԻ 2. կրավորականության ԲԻ 3. դեպի դուրս ուղղված գործողություն 4. ռեպի նեոս ուղղված գործողություն
2. Անվանական գոտի	գործողության անվանում ա/ գործողության մեկ ակտ բ/ գործողության ընթացք 2. գործողության արդյունք ա/ կտոր, մաս բ/ բացվածք, կտրվածք գ/ արդյունքի՝ կտորների ամբողջություն դ/ արդյունքի նվազականություն 3. գործողության կատարող 4. գործողության գործիչ 5. գործողության կատարման ձև, կերպ 6. գործողությանը ենթարկված լինելու վիճակ /բառակազմ. 2-րդ քայլ/ 7. գործողությունը կատարելու հատկանիշի անվանում /2-րդ ք./
3. Ածականական գոտի	1. գործողությունը կատարելու ունակության հատկանիշ 2. գործողությանը ենթարկված լինելու հատկանիշ 3. գործողությանը ենթարկված չլինելու հատկանիշ /2-րդ քայլ/ 4. գործողությանը ենթարկվելու հատկանիշ 5. գործողության արդյունքը կրելու հատկանիշ /2-րդ քայլ/
4. Մակբայական գոտի	գործողությունը կատարելու ունակության հատկանիշի հատկանիշ /2-րդ քայլ/

Ինչպես երևում է աղյուսակից, անգլերենի և հայերենի զուգադրվող ենթախմբերի ՏԲԲ-երի համար ընդհանուր են միայն անվանական և ածականական գոտիները, որտեղ սակայն լիակատար համընկնում չի դիտվում: Երկու լեզուների ուսումնասիրվող բայերն էլ ակտիվություն են դրսևորում մասնավորապես գործողության արդյունքի և գործիչի ԲԻ-ով բառեր ածանցելու ուղղությամբ: Բերված աղյուսակից կարելի է տեսնել, որ հայերենի տվյալ ՏԲԲ-ի ԱԳ-ն ավելի ծավալուն է. այն ներկայացված է 7 ԲԻ-ով, մինչդեռ անգլերենի համապատասխան գոտին ներկայացված է 4 ԲԻ-ով: Ինչ վերաբերում է հայերենի ԱԳ-ի վերջին երկու իմաստներին, դրանք ներկայացնող գոյականները

⁹ Հոծ տառերով ներկայացրել ենք այն բառակազմական իմաստները, որոնք ընդհանուր են զուգադրվող լեզուների համար: Շեղ տառերով ներկայացված են միայն անգլերենի, քննարկվող բայախմբի ՏԲԲ-ին հատուկ ԲԻ-երը, իսկ ուղիղ տառերով՝ հայերենի:

ածանցվել են ԱծԳ-ի համապատասխան ածականներից բառակազմական երկրորդ կամ երրորդ քայլում: Չնայած անգլերենի ԱծԳ-ում ներկայացված են նույն իմաստով ածականներ /գործողությունը կատարելու ունակության հատկանիշ, գործողությանը ենթարկված լինելու հատկանիշ/, դրանք չեն մասնակցում բառակազմական հաջորդ քայլին, քանի որ անգլերենի ԲԲ-երում քննարկվող բառակազմական ներուժը շատ դեպքերում չի իրականացվում:

Յետաքրքրական է մեկ այլ փաստ ևս. հայերենի ուսումնասիրվող ենթախմբում բառակազմական ակտիվություն են դրսևորում վերացարկվածության ամենաբարձր աստիճան ունեցող՝ տվյալ դեպքում կապակցելիության մեծ հնարավորություններ ունեցող բայերը: Դրանք հայերենի ենթախմբի նույնացուցիչներ կտրել և հատել բայերն են: Մինչդեռ անգլերենում մեծ ակտիվություն ցուցաբերում են վերացարկվածության միջին աստիճան ունեցող բայերը, որոնք աչքի են ընկնում իրենց բառիմաստի իմությանին կազմի բազմազանությամբ: Այդպիսին են, օրինակ, to snip և to hack բայերը:

Գրականության ցանկ

1. Абрамян К.Ш., "Структура слово-образовательных парадигм глаголов чувственного восприятия"/на м-ле русс.арм. и англ. яз./ АҚД Тбилиси 1986.
2. Սատրյան Մ. "Ժամանակակից հայոց լեզու":
3. Белошапкова В.А., "Современный русский язык", Москва, "Высшая Школа", 1981.
4. Беляева Т.М., "Словообразовательная валентность глагольных основ в английском языке", Москва, 1979.
5. Գալստյան Ս.Ա., "Ժամանակակից հայոց լեզվի գործնական աշխատանքների ձեռնարկ", Երևան, 2003:
6. Карашук П.М., "Словообразование английского языка", Москва, 1977.
7. Манучарян Р.С., "Словообразовательные значения и формы в русском и армянском языках", Ереван, 1981.
8. Marchand H. "The Categories and Types of Present-day Word-formation", 1960.
9. Мешков О.Д., "Словообразование совр. английского языка", Мос., 1976.
10. Милославский И.Г., "Вопросы словообразовательного синтеза" Москва, 1980.
11. Ջահուկյան Գ.Բ., "Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն", Երևան 1981:
12. Смирницкий А.Н., "По поводу конверсии в английском языке" Иностр. языки в школе, 1954, N4.
13. Соболева П.А., "Об основах слов, связанных отношением конверсии" ИЯШ 1963, вып. 26.
14. Яценецкая М.Н., "Семантические вопросы словообразования. Производящее слово", Томск, 1991.
15. "Longman Dictionary of Contemporary English".
16. The Oxford English Dictionary Oxford at the Clarendon Press.
17. Աղայան Է. «Արդի հայերենի բացատրական բառարան», Երևան, 1976:
18. "Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան", Երևան, 1974: